



նու հետ Մանկունին զիմեց պ. Նահապետեանին խորհուրդ հարցնելով նրանից թէ քննչականին որ Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի եկամուտներն էլ քաշի դէպքի լքմամբն, ինչպէս որ արդէն անուամ է լքմամբն Շուշու, Երեւանի և Ալեքսանդրապոլի հոգևոր դպրոցներին հետ, որոնց և կամուտները փոքր առ փոքր անցնում են էջմիածին, իսկ յիշեալ դպրոցները ստիպւած կը լինեն փակվել: Ասում են որ պ. Նահապետեանը պատասխանել է թէ Ներսիսեան դպրոցի վերաբերութեամբ այդ առժամանակ զոտար է անել, քանի որ հոգաբարձութիւն կայ այդ դպրոցում, բայց նախ պէտք է աշխատել փոքր առ փոքր ոչնչացնել հոգաբարձութիւնը, յետոյ կարելի է անցկացնել դպրոցի բոլոր եկամուտները էջմիածին: Եւ այն ժամանակ դպրոցը, ի հարկէ, կը փակվի: Մանկունին անտարակոյս կը հետեի այդ գեղեցիկ խորհրդին:»

Պ. Սարգիսէ Տէր-Մէլքիսեղեկեանց ուղարկել է մեր խմբագրութեանը 11 բուրլ յօդուտ վանի կողմերի երկրաշարժից փնտրւած հայ գիւղերի: Այդ գումարը հաւաքվեցաւ երկրասարգների մի խումբի մէջ Մեծ-Վարաքիլիս չըջակայ անտառներից մինում տուած ընկերական ճաշկերոյթի ժամանակ: Ս. Տէր-Մէլքիսեղեկեանց, Յ. Տէր-Պետրոսեանց, Պ. Տէր-Պետրոսեանց, Թ. Պետրոսեանց, Մ. Տէր-Պետրոսեանց, Բ. Նալբանդեանց, Մ. Աղաբաբեանց, Ա. Տէր-Ստեփանեանց նուիրելիքն իւրաքանչիւրը 1 բուրլ: Մ. Տէր-Պետրոսեան 50 կ., Ա. Նալբանդեանց 30 կ., Ա. Այվազեանց և Ա. Նալբանդեանց իւրաքանչիւրը 20 կոպ. իսկ քահանայ Խ. Խանդատեանց, որ խմբի մէջ էր, նուիրելիք յետոյ 2 բուրլ: Ընդամենը 11 բուրլ 20 կ., որից փոստի ծախսը 20 կ. գուրս գալով, ստացանք 11 բուրլ:

ՍՂՆԱՍԻՅ, Եղիշէ քահանայ Տէր-Աստուածատրեանցից ստացանք 10 բուրլ յօդուտ վանի երկրաշարժից փնտրւածների, որ նուիրելիքն մի մի բուրլ հետեւեալ տաս անձինք. քահանայ Տէր-Աստուածատրեանց, Գ. Ամիրխանեանց, Բ. Տէր-Մատթէոսեանց, Իշխան Իլիա Թումանով, Վ. Սուքիասեան, Ա. Սուքիասեան, Մ. Արսէլեանց, Ա. Սիմէոնեանց, Ա. Համբարձումեանց և Բ. Մէլք-Նուրարեանց, փոստի ծախսը Եղիշէ քահանան է տուել:

Ս. Պետրոսեանցի ուսանող պ. Պետրոսեանց խնդրում է մեզ տպել հետեւեալը: «Այլքի առաջ ունեւոր մեր հայ հասարակութեան, մասնաւորապէս մեր օրիորդների համալրութիւնը դէպի չքաւոր հայ ուսանողները, շտապում եմ ձեր լրագրի միջոցով յայտնել իմ խորին շնորհակալութիւնը:

Խափանու, որք եղեն ընդդէմ թիւրքաց ի մերում ժամանակի, այն է՝ յամի Տիւրք 1722 և հայոց 1171» Բայց զորանից, Չամչեանի պատմութեան երրորդ հատորի 784 երևոյցի մինչև 800 երեսը նուիրւած է Կաւթիթ բէկին: Ինչպէս երևում է, Չամչեանը իր տեղեկութիւնները քաղել է մի այնպիսի գրքից, որպիսին է պ. Գուլամիրեանցի հրատարակութիւնը, որովհետեւ երկուսի բովանդակութեան մէջ մի նշանաւոր տարբերութիւն չենք գտնում:

Թէ առաջին և թէ երկրորդ պատմութիւնը, կրկնում եմ, թերի ու անկատար են: Նրանց մէջ կան ահագին բաց մնացած տեղեր, որ անցքերի ամենադժուարն են: Օրինակի համար, այդ պատմութիւններին մէջ ամենին յիշատակութիւն չը կայ, թէ Սիւնեաց աշխարհի հայոց ապստամբութիւնը ինչ կապ ունէր Պետրոս մեծի Պարսկաստանի արշաւանքների հետ, կամ ինչ գրեթէ խաղաղ և կամ որ աստիճան հայերը իրանց զենքով ու խելով նպատակեցին ուսուցալսողները արքայական ծովեզերեայ երկրները տիրապետելու ժամանակ:

Այդ ժամանակի անցքերի ամենամեծ մասը մնացել է բաց մեր ազգային պատմութեան մէջ: Յայտնի է, որ Վարաքիլի հինգ ժառանգական մէլքութիւնները՝ Կիւլիստանը, Ջրաբերդը, Խաչենը, Կիւլախը և Վարանդա՝ այդ ժամանակ կազմում էին մի գաշնակցական միութիւն, որ ուսուցալսողների մէջ \*) յայտնի է անունով:

\*) Собрание актовъ, относящихся къ обществу исторіи армянскаго народа» տպւած Մոսկուայում 1833 թ.

օրիորդ Գ. Քալանթարեանին իր բացած ստորագրութեան համար, որից գոյացած գումարը, 320 բուրլ, եւ լիովին ստացալ նոյն օրիորդից, Նոյնպէս յայտնում եմ շնորհակալութիւնս այն անձանց, որոնք օգնել են օրիորդին հաւաքել այդ գումարը:

Ի. Գ. Ի. Ի. Բ. մեզ գրում են որ յուլիսի 5-ին այդտեղի հայ թատրոնականները խուճըր ներկայացրեց բարեգործական նպատակով «Արշակ II» ողբերգութիւնը և «Սկան Պետրովիչ» օղորդիլը: Գպրոցի դահլիճը լէ էր բազմութեամբ:

Երեւանի «Պատկ» լրագրին էջմիածնից գրում են: «Պ. Արշակ Նահապետեան հաղորդել է «Մեղու Հայաստանի» լրագրին որ Վահագն Կաթողիկոսը բոլորովին առողջ է: Միթէ այլ կերպ վկայութիւն կարելի էր սպասել նրանից, ով նոր է հրաւիրւում էջմիածնի Գեորգեան ճեմարանում տեսական պաշտօնի: Մեղ մինչև անգամ հաւատացնում են որ նախ քան տեսական պայմանների մասին խօսելը, քաղաքավարի կերպով առաջարկել են այդ վկայութիւնը գրել:»

«Պատկ» լրագիրը գրում է հետեւեալ իր 23 համարում: «Ազգի համար դանաղան անձանց, նոյն իսկ Սինօքի և Պրօկուրորի վկայութիւնները Վահագնի առողջութեան մասին նշանակութիւն չունեն: Մենք կը հաւատանք երբ մի քանի բժշկների քննութիւնը կը վկայի յայտնապէս: Հիւանդների մասին միայն բժշկների խօսքերին կարելի է հաւատալ:»

Այս տարի «Մշակը» հատով ծախված համարների հետ ունի 1200 բաժանորդ, մի թիւ, որին մեր լրագիրը կրէք հասած չէր անցեալ տարի: Ներում և որին երբեք հասած չէր ոչ մի հայ պարբերական հրատարակութիւն Ռուսաստանում:

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՖԻԱՆՍԻԱ

Յուլիսի 2-ի ժողովրդական տօնի ժամանակ, Բաստիլիան վերցնելու օրը, ամբողջ փարիզը զարդարվեցաւ զօրշաչներով: Ժամի 2-ին մեծ զօրախաղ կատարվեցաւ Գիշերը էլէկտրական լուսով լուսաւորված քաղաքը հիւանդի տեսարան էր ներկայացնում: Նահանգներից հաղորդում են, որ ամեն տեղ այդ օրը մեծ շքեղութեամբ տօնվեցաւ:

«армянское собрание» Այդ միութիւնը ունէր մօտ 60 հազար զինված մարդիկ, որոնք մի հոգով աշխատում էին վերականգնել Սիւնեաց աշխարհում հայոց անկախ իշխանութիւն: Միութեան առաջնորդներն էին՝ Գանձաւարի Եսայի և Ներսէս կաթողիկոսները, Մէլք-Աւան խանը, Մէլք-Եգանը, Աւան-Իւզբաշին, Մէլք-Բաղին, տէր Անտօնը և ուրիշ շատերը: Գրանք անդադար բանակցութիւններ ունէին թէ Պետրոս մեծի, թէ նրանից յետոյ Նիկաթիւրի Ի-ինի հետ, զեպագանք էին ուղարկում Ս. Պետրոսեանց, Մոսկովա և դրանց անունով մենք գտնում ենք մի շարք հրովարտելներ, որ գրված են Պետրոս մեծից ու նրա յաջորդներից, որ վերաբերում են հայոց շարժման գործին: Բայց այդ բոլորի մասին լուռ է մեր պատմութիւնը: Նա մինչև անգամ չէ յիշում անունները այն երեւելի դիպլոմատների, որպէս էին խորապէս Օրին և նրա ընկեր Մինաս վարդապետը, որոնք, բայց Ռուսաստանից, եւրօպական այլ պետութիւնների դռներն եւ անդադար բաղխում էին հայոց անկախութեան գործը աջողացնելու համար: Մէլք-Աւան-խանը (Յովհաննէս իշխանը), որ յիշեալ միութեան պարագլուխն էր, որի անունով կայսրները հրովարտական և շահերը քրիմսներ էին ուղարկում, այդ երեւելի հերոսը, և մի և նոյն ժամանակ քաղաքագետ անձը, մեր պատմութեան մի քանի տղերի մէջ յայտնվում է ինչպէս մի ըստուհի և իսկոյն անհետանում է: Մեր պատմութիւնը համառօտ տեղեկութիւններ է տալիս միայն Վահանի մէջ կատարված անցքերի մասին, որոնց պարագլուխն է Կաթիթ բէկը:

Ինձ նպատակ դնելով բոմանի ձևի մէջ ամ-

հունիսից հեռագրում են, որ Սֆակս ուղարկված տեղացի 1,000 զինուորները յետ են բերված, որովհետեւ նրանք ոչ թէ միայն պիտանի չէին, այլ և փորձեցին Ֆրանսիացիների դէմ կրակ արձակել: Կարծում են, որ Սֆակսի մէջ ափ իջնելու համար հարկաւոր են գտնեա 3,000 զինուորներ: Ապստամբները ճշգրտվեամբ են արձակում իրանց լծանաթները, իսկ այդ հանգամանքից կարելի է եզրակացնել, որ նրանց առաջնորդում են օտար լծանաթներ: Ապստամբների ռուսները չեն հասնում Ֆրանսիական նաւերին: Երկրի ներքին բաժինների մէջ ապրող ցեղերը ուղեւորվում են դէպի Սֆակս, հաւատացած լինելով, որ սուլթանը կօգնի նրանց իր զօրքերով: Կայսրօռն քաղաքը դեռ հանգիստ է: Բնակիչները չափազանց մեծ երկիւղ էին կրում շրջակայ արաբական ցեղերի ապստամբական արամադրութենից, բայց ներկայումս նրանց ուշադրութիւնը գրաված է Սֆակսի մէջ կատարվող անցքերով: Արաբները կը դիմեն Կայսրօռն այն ժամանակ, երբ Ֆրանսիացիները կը հայտնեն նրանց Սֆակսից: Սֆակս ռաբակոնիւրց յետոյ Ֆրանսիական ծովայնաւոր մի քանի փոքր նաւեր ուղարկեց դէպի ափը իմանալու համար, արդեօք չեն հեռացել ապստամբները Սֆակսից: Ապստամբները, կարծելով, թէ Ֆրանսիական զօրքերը ափ են իջնում, ահագին թուով հաւաքվեցան ափի մօտ: Նաւերից նրանց դէմ կրակ բացարին և արաբները ցրվեցան, բազմաթիւ զիւններ թողնելով ափի մօտ:

Ֆրանսիական յայտնի հրապարակաթուղթ Լիմօնան «Journal des Debats» լրագրի մէջ մի յօդուած տպեց, որի մէջ նա ուշադրութիւն է դարձնում այն կասկածաւոր պատրաստակաւութեան վրա, որով սենատի պահպանողական անդամները համաձայնեցին ընդունել խօսքի և մամուլի անսահման ազատութեան ըսկզբունքը, երբ քննվում էր սենատի մէջ տպագրական օրէնքը: Լիմօնանի կարծիքով, հանրապետական կառավարութիւնը անգոհւելիս մօր է վարվում, իր աններել լծանաթների ձեռքը տալով մի զէնք գոյութիւն ունեցող հիմնարկութիւնների դէմ և

փոխել և ժամանակի պատմութիւնը, շատ պարզ է, որ մեծ աշխատութիւնների և ահագին զբաղւթիւնների պիտի հանդիպէլ բոլոր հարկաւոր նիւթերը ձեռք բերելու համար: Եւ այս աշխատութիւնը, եթէ ոչ բոլորովին, գոնէ մասամբ լրացրի օտար աղբիւրներից օգուտ քաղելով: Բայց ինձ դեռ բաւական տեղեկութիւններ մնում են պակաս: Այս պատճառով եւ ընդհանրեցի «Կաթիթ բէկի» հրատարակութեան շարունակութիւնը «Մշակի» մէջ, դիտաւորութիւն ունենալով անձամբ ճանապարհորդել Սիւնեաց աշխարհում և այդ վէպի մնացած մասները իր տեղում մշակել:

Իմ ճանապարհորդութեան նպատակը ոչ միայն «Կաթիթ բէկը» կատարելագործելն է, այլ, որքան հնար է, նիւթեր հաւաքել Կաթիթ բէկից յետոյ յայտնված մէլքների կեանքից և գործունէութիւնից, որոնք կարող էին ծառայել ինձ առանձին վէպեր կամ պատկերների ստեղծելու: Որքան լծանաթային է մեզ համար այդ ժամանակների հերոսների յիշատակը անմահացնելը, այնքան ցաւալի կորուստ է, երբ նրանք կը մոռացվին, կանխեստան մեր անհոգութիւնից:

Իմ ճանապարհորդութիւնը կը տեւ մի քանի ամիս: Եթէ կը յաջողվի ինձ հաւաքել իմ ցանկացած բոլոր տեղեկութիւնները, եւ կը կազմեմ Վարաքիլի մէլքների ամբողջ պատմութիւնը, սկսեալ Կաթիթ բէկից մինչև վերջին ժամանակները: Որովհետեւ այդ գործը ձեռնհաս անձինքների օգնութեամբ կարօտ է, այս պատճառով, եւ հրապարակաւ դիմում եմ այն բոլոր պարոններին, որոնց մօտ կան թէ գրաւոր և թէ բերանացի տեղեկութիւններ, խնդրելով, որ բարեհաճեն հաղորդել ինձ, եւ այլա-

միւնոյն ժամանակ տպահոված չը լինելով, որ Ֆրանսիական հանրապետութեան լծանաթները դէպի չարը գործ կը ցնեն այդ զէնքը: Շատ բնական է, որ կղերականները և միապետականները, կառավարութեան ընդդէմ լինելով և կամենալով վերականգնել կառավարչական եղանակը, մամուլի անսահման ազատութիւնը իրանց համար մեծ արտօնութիւն են համարում և կը քարոզեն այդ ազատութիւնը մինչև այն ժամանակ, երբ նրանց կաշողի խել իշխանութիւնը հանրապետականների ձեռքից: Ֆրանսիական պահպանողականների բացականչութիւնները խօսքի և կարծիքների ազատութեան մասին ազատ նպատակների համար չեն: Նրանց հարկաւոր է ազատութիւնը առանց արգելքի հանրապետութեան վրա յարձակվելու համար, սահմանադրութիւնը և օրէնքները անպատիժ ծաղրելու, պետական և քաղաքական կազմակերպութեան հեղինակութեանը փնտրելու համար: Լիմօնանի կարծիքով, մամուլի ազատութեան կղերական և միապետական բազմաթիւ կուսակիցները անպատճառ պէտք է կասկածելի դարձնեն տպագրական նոր օրէնքը, որ ամենքին թոյլ է տալիս անպատիժ յարձակվել հանրապետական սկզբունքի վրա: Նոր օրէնքի համեմատ անպատիժ են մնում այն մարդիկ, որոնք ապստամբութեան կամ իշխանութեանը անհնազանդութեան են հրաւիրում, եթէ այդ հրաւերները մնում են առանց հետեւանքի: Բայց պէտք է իմանալ, նկատում է Լիմօնան, երբ յեղափոխական ձգտումները կը հասնեն իրանց նպատակին, այն ժամանակ պատժելը շատ ուշ կը լինի, որովհետեւ ազատամիտ օրէնքի զինները և այդ օրէնքների գործադրողները արդէն բանտի մէջ կը լինեն նստած:

Լիմօնանի այդ յօդուածը մեծ տպաւորութիւն գործեց Փարիզի մէջ:

«ПОРЯДОКЪ» ԼԻԱԳՐԻ ԹՂԹԱՅՈՒԹԻՒՆԸ

### II

Հիւսիսային և հարաւային զերմանացիների բնաւորութեան, տրամադրութեան և

պէս անկարող եմ վարձատրել ինձ օգնողներին, միայն իմ գրքի յառաջաբանի մէջ կը յայտնեմ անունները այն բոլոր անձինքների, ումից ինչ տեսակ նիւթեր որ ստացած լինեմ:

Առ այժմ իմ հրապարակական շնորհակալութիւնը յայտնում եմ պոլիօլիէի Գ. Կ. Լալորովին, որ ոչ սակաւ օգնեց ինձ Կաթիթ բէկի և նրա գործակիցների մասին նիւթեր հաղորդելով: Այդ համետ, մի և նոյն ժամանակ անդու աշխատասէրը ամբողջ 20 տարի ուսումնասիրում է կովկասեան ցեղերի հին և նոր պատմութիւնը: Շատ ցանկալի էր, որ մեծ պարոնը մի օր տպագրութեամբ ի լոյս ածէր իր ուսումնասիրած պատմական հարուստ նիւթերը, որով մեծ ծառայութիւն արած կը լինէր մեր աղքատ զբոսաշրջականները: Ինձ մի քանի տեղեկութիւններ հաղորդեց մագիստրոս հայր Կարբիլէ Պատկանեանը Ս. Պետրոսեանցից, որոնց մասին յայտնում եմ իմ խորին շնորհակալութիւնը:

Խոստացել են նիւթեր տալ պ. պ. պոլիօլիէի Նիկ Ա. Թ. Մէլք-Հայկազեանը, փաստաբան Գ. Աթաբեկեանը և գրաւաճառ Ա. Լեւոնյանը:

Իմ անուշով նամակների կամ թղթեր կարող են ուղարկվել «Մշակի» խմբագրատանը, որը իր կողմից կը հասցնէ ինձ:

Եւ երկար սպասել չեմ տալ «Կաթիթ բէկի» ընթերցողներին: Նշանաւոր տեղերում իմ ճանապարհորդութիւնը կատարելուց յետոյ, պիտի առանձնանամ ճաթիկ վանքում, այնտեղից կըսվե՛սեմ շարունակութիւնը ուղարկել «Մշակին»:

Բաթիկ